ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0025, Երևան, գործավարություն, հեռ. 596-125

№ 27/126 «15» 02 2023թ.

Ձեր

«ՄԵԳՆԱ» ՍՊԸ-Ի ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ
Ռ. ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ

ՀՐԱՎԵՐ

ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ

Հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ ոստիկանության կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել **ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ:**

Առաջարկվում է Ձեզ մատուցել վերոնշյալը:

Գնումները ֆինանսավորվելու է ՀՀ 2023 թվականի ոստիկանության բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների հաշվին և գնման ընդհանուր գինը չի կարող գերազանցել այդ գնման ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների չափը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն գնումներին մասնակցելու իրավունքը հավաստելու համար պատվիրատուին պետք է ներկայացվի հաստատված և ստորագրված հայտարարություն այն մասին, որ **«ՄԵԳՆԱ» ՍՊԸ-ն** ունի.

1. մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը
2. մասնագիտական փորձառություն
3. տեխնիկական միջոցներ
4. ֆինանսական միջոցներ
5. աշխատանքային ռեսուրսներ

Ձեզ է ուղարկվում **ՀՀ Ո ՄԱԾՁԲ-2023-ԱՎ/ՎԾ/Ա-21** ծածկագրով ընթացակարգի պայմանագրի նախագիծը:

Համաձայնության դեպքում անհրաժեշտ է 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Ձեր կողմից ստորագրված և կնքված պայմանագիրը:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ